791

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

« 04 » 02 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0007-22

Ձեռնարկողը՝ ***«Ղազարյան» ՍՊԸ***
Արագածոտնի մարզ, 1 Փ. 2 ՆՐԲ./S/2 Արուճ 0210

Գործունեությունը՝ ***Արուճի փուֆերի հանքավայրի Հարավային տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի՝ պարտականությունները կատարող Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 9 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0007-22
<04> 02 2022թ.

Արուճի տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Ղազարյան» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Նոր Ամանոս համայնք

Ներածական մաս. Համաձայն ՀՀ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 2)-րդ կետի ա. ենթակետի ՝ Արուճ տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասի երկրաբանական ուսումնասիրությունը դասակարգվում է որպես «գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

«Ղազարյան» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ, որի նպատակն է կատարել մանրակրկիտ երկրաբանահետախուզական աշխատանքներ Արուճի տուֆի հանքավայրի Հարավային տեղամասում և որոշել տեղամասի տուֆերի շերտախմբի հզորությունը, որակական հատկությունները, ինչպես նաև պարզաբանել դրանց պիտանելիությունը որպես շինաքար:

Նկարագրական մաս. Արուճի տուֆի հանքավայրի Հարավային տեղամասը գտնվում է Արագածոտնի մարզի Արուճի համայնքի վարչական տարածքում՝ Արուճ գյուղից 5.6կմ դեպի հարավ, Նոր Ամանոսից 974.5մ դեպի հյուսիս-արևմուտք, Շամիրամ գյուղից՝ 4.7կմ դեպի հարավ-արևմուտք, Արուճի տուֆի հանքավայրի հարավ-արևմտյան ծայրամասից 365մ դեպի հարավ և զբաղեցնում է 4.86հա տարածք: Տեղամասի մոտակա բնակավայրերն են՝ Արուճ, Շամիրամ,

Արագածոտն, Ուջան, Ագարակ, Նոր Ամանոս գյուղերը, որոնք տեղամասի և միմյանց հետ կապված են ասֆալտապատ ու գրունտային ճանապարհներով:

Հայցվող տեղամասը արևելքից սահմանակից է Արուճի հանքավայրի տարածքի հետ: Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են `

- հյուսիսային լայնության -40° 14' 11"
- արևելյան երկայնության -44° 04' 50"

Հետախուզվող տեղամասի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 համակարգով հետևյալն են՝

1. 8421331.1530 4456297.5110
2. 8421349.1100 4456365.7100
3. 8421351.4400 4456364.0000
4. 8421399.8600 4456479.2000
5. 8421743.5930 4456362.4170
6. 8421720.0610 4456296.4890

Արուճի հանքավայրի մանրազննին հետախուզական աշխատաքները կատարվել են 1990թ.-ին, շահագործական հետախուզումը՝ մինչև 1993թ.,որի արդյունքում հանքավայրի պաշարները հաստատվել են որպես շինաքար:

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է համայնքի ղեկավարի կողմից տրված նախնական համաձայնությամբ: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներկայացված են գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով՝ արոտավայրերով և «այլ» գործառնական նշանակության հողերով

Արուճի տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասը գեոմորֆոլոգիական տեսակետից ներկայացնում է միջին բարձրության լեռնային հարթություններ, որոնց բնորոշ է լավաներով ծածկված՝ սարավանդներով և ձորակներով կտրտված, մասամբ տափարակ լանդշաֆտը:

Հայցվող տարածքի շրջանը գտնվում է Արագածի հրաբխային զանգվածի հարավային լանջին՝ Շամիրամի սարավանդում, որը ջրազուրկ կիսաանապատ է, մակերևույթը կտրտված բազմաթիվ սելավատար ձորակներով և չորահուներով: Հարավային տեղամասում, ինչպես նաև հարակից տարածքներում արտածին երկրաբանական երևույթներ չկան, ամենամոտ սողանքային երևույթը գտնվում է Կարմրաթառ լեռան արևմտյան լանջին՝ տեղամասից մոտ 5.3կմ հեռավորության վրա: Սողանքային մարմինը ըստ վտանգավորության գնահատվել է III-րդ դասի, իսկ ըստ ռիսկայնության՝ ցածր:

Հարավային տեղամասի բնական ջրային ցանցը թույլ է զարգացած՝ ապարների բարձր ջրաթափանցելիության և տեղումների սակավության հետևանքով և հիմնականում բնութագրվում է սեզոնային բնույթ ունեցող հեղեղներով: Տարածքում ստորգետնյա ջրեր չկան, որը պայմանավորված է տարածքի մայրական ապարների ինֆիլտրացիոն հատկություններով:

Արուճի տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասում հողային ծածկույթը ներկայացված է բաց-շագանակագույն քարքարոտ կարբոնատային ցեմենտացված հողերով: Նախատեսվող գործունեության տարածքում առանձին հատվածներ ներկայացված են արմատական ապարների՝ տուֆերի, տուֆալավաների, լավաների մերկացումներով: Տեղամասի հողի շերտի միջին հզորությունը տատանվում է 0.17մ-ից (փորձնական բացահանքի տարածքում) մինչև առավելագույնը 0.3մ՝ հորատման հարթակների հատվածում (միջինը ընդունվում է 0.25մ): Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Հողերի ծավալային միջին զանգվածը կազմում է 1.34գ/սմ^3-ի, տեսակարար զանգվածը՝ 2.57/սմ^3-ի, խոնավությունը՝ 22%:

Տեղամասում հողային և հետևաբար բուսական ծածկույթը ներկայացված են տարածքի միայն 54%-ի վրա :

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքում 2020 թվականի աշնանը կատարվել են նախնական դիտարկումներ՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման նպատակով, որի արդյունքում սակայն այդպիսիք չեն հայտնաբերվել, ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ ևս չեն հայտնաբերվել:

Արուճի տուֆի հանքավայրի Հարավային տեղամասի 4.86 հա տարածքում նախատեսվող լաբորատոր հետազոտությունների դրական արդյունների դեպքում կատարվելու է նաև արդյունաբերական կարգով օգտակար հանածոյի պաշարների հաշվարկ:

Բուն տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հիմնականում միջին չորրորդականի հասակի հրաբխային առաջացումները, որոնք ներկայացված են արթիկի տիպի հրաբխային տուֆերի դեպի հարավ-արևմտյան ուղղությամբ մեղմ անկմամբ ծածկոցի ձևով: Նախատեսված տեղամասի սահմաններում մակերևույթը ծածկված է փոքր հզորության բուսական ծածկով, տեղամասի մակերևույթը տեղ-տեղ քարքարոտ է, ժայռոտ և մերկացած:

Ըստ նախնական դիտարկումների և Արուճի տուֆի հանքավայրի փաստացի տվյալների համադրությամբ տեամասի երկրաբանական կտրվածքը հետևյալն է /վերևից-ներքև/.

- հողաբուսական շերտ, բաց մոխրագույն կավավազներով և ավազակավերով, որոնք իրենց հերթին պարունակում են տուֆերի, հաճախ նաև բազալտների բեկորներ, այս շերտի հզորությունը ուսումնասիրվող տեղամասում տատանվում է 0.15-ից 0.25մ սահմաններում, միջինը կազմելով 0.17մ,
- հրաբխային Արթիկի տիպի տուֆեր, որոնք ունեն շերտաձև տեսք և գրեթե հորիզոնական տեղադրում, որոնց հզորությունը տատանվում է 6.25-ից մինչև 8.2մ սահմաններում,
- դոլերտային բազալտներ, որոնք տուֆերի համար հանդիսանում են հիմնատակող ապարներ:

Երևակման տուֆերը միջին ամրության, միկրոծակոտկեն ճեղքավոր ապարներ են, որոնք իրենց մեջ ներփակում են քվարցի սպիտակ գույնի մանր հատիկներ, էֆֆուզիվ ապարների փոքր չափի բեկորներ, ինչպես նաև հրաբխային ապակի (ֆյամե), տուֆային հաստվածքի վերին շերտը (մինչև 0.5մ հզորությամբ) բնութագրվում է խիստ ճեղքավորվածությամբ:

Տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական հանույթ 4.86հա տարածքի վրա, որի աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված կազմակերպության կողմից:

Հորատվելու է 5 հորատանցք՝ 45.0 գծ.մ ընդհանուր ծավալով, որոնց խորությունը ընդունվում է 7.5-ից 9.5մ: Հորատումը իրականացվելու է պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված խմբի կողմից POLE-HOLE DIGGER հորատող հաստոցով կարծր համաձուլվածքային թագիկներով, 103մմ նախնական և 93մմ վերջնական տրամագծով:

Ըստ նախնական տվյալների հորատվող ապարների կարգերը հետևյալն են՝

- ժամանակակից էլյուվիալ-դելյուվիալ առաջացումներ /միջին հզորությունը 0.17մ/ – IV կարգ (0.85մ),
- տուֆեր - VII կարգ (42.65մ),
- դոլերիտային բազալտներ - IX կարգ (1.5մ):

Աշխատանքների կատարման համար նախատեսվում՝ 5 ինքնագնաց հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում:

Նախատեսված է պիտանի բլոկների ելքի տոկոսը որոշելու նպատակով փորձնական բացահանքի անցում 100մ^3 ծավալով, որից 20մ^3 մակաբացման ծավալն է, իսկ 80մ^3-ը՝ տուֆային զանգվածը:

Նմուշարկման ենթակա են հորատահանուկը և փորձնական բացահանքը: Երկրաբանական փաստագրման աշխատանքներ նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով, աշխատանքների ծավալները հետևյալն են.

- փորձնական բացահանքի փաստագրում - 25գծ.մ
- հորատհանուկի փաստագրում - 45գծ.մմ:

Ընդամենը - 70գծ.մ

Որպես հումք շինարարական նյութերի արտադրության համար տուֆերի որակական հատկանիշները պարզաբանելու նպատակով, նախատեսվում է կատարել նմուշարկում հորատանցքերից և փորձնական բացահանքից: Հորատահանուկը կնմուշարկվի 4.05-5.0մ միջինը 4.5մ երկարությամբ՝ ընդհանուրը 10 նմուշ, իսկ փորձնական բացահանքից նախատեսվում է վերցնել /20x20x20սմ/ չափի ակոսային 2 նմուշ, որոնք կենթարկվեն քիմիական և ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների: Նախատեսվում է կատարել նաև տուֆերի քիմիական և պետրոգրաֆիական հետազոտություններ, որի համար կվերցվի 2-ական նմուշ: Հորատումից ստացված ամբողջ հորատհանուկը ենթարկվում է նմուշարկման, որը կրում է սեկցիոն բնույթ: Նախատեսվում է նաև փորձնական քարահանքից /20x20x20սմ/ չափի 2 մոնոլիտ նմուշների վերցնում:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացում վերցված բոլոր նմուշները կենթարկվեն լաբորատոր հետազոտությունների, ինչպես նաև նախատեսվում է կատարել օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական քիմիական, պետրոգրաֆիկան ուսումնասիրության աշխատանքներ:

Ընդհանուր առմամբ ֆիզիկամեխանիկական հետազոտությունների համար նախատեսվում է վերցնել 12 նմուշ, այդ թվում 10 հանուկային, 2 ակոսային, իսկ տուֆերի քիմիական կազմը որոշելու նպատակով 2 նմուշ՝ 1-ը հորատհանուկից, 1-ը ակոսներից:

Վերցրած նմուշները կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների «Անալիտիկ» ՓԲ ընկերության լաբորատորիայում, իսկ քիմիական ուսումնասիրությունները կիրականացվեն ՀՀ ԳԱ երկրաբանական ինստիտուտում:

Նախատեսվում է կատարել նաև պետրոգրաֆիական հետազոտություններ, որի համար պետք է պատրաստվի 2 շլիֆ, որի պետրոգրաֆիական ուսումնասիրությունները կկատարվի ՀՀ ԳԱ երկրաբանական ինստիտուտում, ինչպես նաև կատարել համապատասխան դիտարկումներ՝ հետախուզվող տարածքում ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների /ջրաբեր հորիզոնների առկայությունը պարզելու համար/ պարզաբանման նպատակով, այդ թվում նաև նախատեսվում է ինժեներաերկրաբանական հետազոտություններով պարզել՝ տեղամասի տուֆերի կազմը, ճեղքավորվածությունը, դրանց կառուցվածքային առանձնահատկությունները, անիզոտրոպիան:

Անցած լեռնային փորվածքները, հանուկը պետք է ենթարկվեն ռադիոմետրական չափումների, ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար

Կկառուցվի 5 հորատման հրապարակ, յուրաքանչյուրը 42մ^2 մակերեսով՝ ընդհանուր մակերեսը կկազմի՝ 210մ^2:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հորատման հրապարակների համար նախապես ընտրված տարածքների միայն 54% է հողաբուսական ծածկով, իսկ տեղամասի հողի շերտի միջին հզորությունը 0.17մ՝ հողաբուսական շերտի ծավալը կկազմի 19.28մ^3:

Ելնելով այն հանգամանքից, որ արդեն իսկ գոյություն ունեն հանդամիջյան գրունտային ճանապարհներ, որոնք բարենպաստ են և օգտագործվում են Արուճի տուֆի հանքավայրի շահագործման համար, ապա նոր ճանապարհների կառուցում և նորոգում չի նախատեսվում:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախատեսվում է՝ հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողի շերտը (առավելագույնը 0.3մ չափով, միջինը տեղամասում՝

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

0.25մ), պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով՝ ծածկել հողաշերտով:

Երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Արուճի տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասի տարածքում ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հնարավոր են ազդեցություններ մթնոլորտի, մակերևութային ջրերի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա՝ տվյալ ազդեցությունները բնութագրվում են՝

- մթնոլորտային օդ աննշան արտանետումները կապված կլինեն մեքենաների տեղաշարժի, հորատման աշխատանքների և փորձնական բացահանքի անցման ժամանակ առաջացող վնասակար գազերի և փոշու արտանետումի հետ: Ըստ նախնական հաշվարկների երևակման տարածքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի օքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցի նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երևակման տարածքում մակերևութային ջրեր առկա չկան և երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Հայցվող տարածքից մոտ 50մ դեպի հյուսիս-հյուսիս-արևմուտք գտնվում է 1.3հա մակերեսով արհեստական լճակ, որտեղ կուտակվում են ձորակների ջրերը, որի համար ապահովում են ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի թիվ 64-Ն որոշման պահանջները:

Բնական ռեսուրսներից ջրառ չի կատարվելու, իսկ ջրցանի համար անհրաժեշտ տեխնիկական և աշխատակազմի խմելու ջուրը բերվելու է պայմանագրային հիմունքներով՝ մոտակա բնակավայրից:

- Հողային ծածկույթի վրա աննշան, կարճատև բացասական ազդեցությունը կապված կլինի հորատման հարթակների կառուցման և փորձնական բացահանքի անցման ժամանակ:

Աշխատանքների ժամանակ կառաջանան աղմուկի և թրթռումների նոր աղբյուրներ, աղմուկի առավելագույն մակարդակը չի գերազանցի 95դԲԱ, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը՝ 80դԲԱ, իսկ առաջացող թրթռումը (վիբրացիա) կապված կլինի տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, որոնց սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չի գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կառաջանա հետևյալ տեսակի թափոններ.

- մակաբացման փուխր-բեկորային առաջացումներ,
- հորատման թագիկների մնացորդներ, որոնք բարձր ամրության պողպատե ձուլվածքից կազմված իներտ մնացորդներ են, հորատումը և դրա հետ փոխկապակցված բոլոր աշխատանքները իրականացվելու են մասնագիտացված կազմակերպության կողմից, որի պատճառով «Ղազարյան» ՍՊ ընկերության կողմից հորատման թագիկների թափոնների կառավարում չի կատարվելու,
- չտեսակավորված կենցաղային աղբ, օրեկան առավելագույնը 10կգ ծավալով: Կենցաղային աղբը կհավաքվի հատուկ անթափանց տարողություններում, 50լ տարողությամբ պոլիէթիլենային

պարկերում: Թափոնը տեղափոխվելու է մոտակա աղբահավաք կետեր, որտեղից պարբերաբար հեռացվում են Կոմունալ ծառայությունների կողմից դեպի շրջանի աղբավայր,

- նավթամթերքների և քսայուղերի մնացորդներ, որոնք պահեստավորվելու են հատուկ տակառներով կամ կոնտեյներներով՝ մեկուսացված հարթակի վրա: Բանեցված շարժիչների յուղերը (20լ ծավալով) և դիզելային յուղերի մնացորդներ (25լ ծավալով), որոնք հավաքվելու են այդ նպատակով առանձնացված տարածքներում, առանձին մետաղական տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ հնարավորության դեպքում երկրորդական վերամշակման հանձնելու նպատակով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- հայցվող տարածքներում նավթամթերքների պահեստավորման բացառում, մեքենաների լիցքավորման, յուղերի, քսայուղերի փոխարինման աշխատանքները իրականացում մոտակա բնակավայրերում, համապատասխան մասնագիտական ծառայություններ մատուցող ընկերությունների տարածքում,
- կենցաղային աղբի հավաքում հատուկ տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր, ինչի նպատակով ընդերքօգտագործման իրավունքը ձեռք բերելուց հետո պայմանագիր կկնքվի համայնքի հետ,
- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- փոշենստեցման նպատակով ճանապարհի և հորատման հարթակների ջրում,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որի հետագայում դատարկումը կատարվում է հատուկ ծառայության ուժերով, համապատասպան պայմանագիր կկնքվի մասնագիտացված ծառայություն մատուցող ընկերության հետ ընդերքօգտագործման իրավունքը ձեռք բերելուց հետո,
- աղմուկի և թրթռումների մակարդակների վերահսկողություն,
- թռչունների բների հայտնաբերման դեպքում, դրանց տեղափոխում աշխատանքների վայրերից դուրս և այլն:
- բեռների և աշխատակազմի փոխադրում գոյություն ունեցող ճանապարհներով՝ կենդանիների կենսամիջավայրի խախտումը բացառելու նպատակով,
- ընդերքօգտագործման թափոնների կառավարում՝ համաձայն փաթեթում ներկայացված թափոնների կառավարման պլանի,
- խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողի շերտը առավելագույնը 0.3մ չափով, (միջինը տեղամասում՝ 0.25մ), պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով՝ ծածկել հողաշերտով: Հորատահարթակներում (210մ^2) հողաբուսական ծածկն առկա է միայն 54% մակերեսում տեղամասում՝ ըստ կատարված նախնական դիտարկումների տվյալները:

Հորատահարթակների ռեկուլտիվացիայի ծավալը կազմում է 19.28մ^3, փորձնական բացահանքի անցման ժամանակ, բացահանքի մակերեսը կկազմի 50մ^2: Ռեկուլտիվացիայի ծավալը կկազմի՝ 20.0մ^3 (միջինը 0.17մ հողաշերտ և 0.23մ ալյուվիալ նստվածքներ ճաքճքված ու փշրված տուֆերի կտորներով): Ռեկուլտիվացիայի ծավալը ընդամենը կկազմի 39.28մ^3, ընդհանուր մակերեսը 260մ^2:

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացնել 130.0 հազ.դրամ, որից 110.0 հազ.դրամը աշխատավարձ է, 10.0 հազ.դրամը՝ գոմաղբի գնման համար անհրաժեշտ գումարն է, իսկ 10000 դրամը նախատեսված է բույսերի սերմերի գնման համար:

Բացի վերը նշվածից նախատեսվում է նաև մի շարք այլ միջոցառումներ որոնք են՝ հողերում առկա օբյեկտների պահպանությանն, արտակարգ իրավիճակներին պատրաստ լինելու, շարժական կապի միջոցների առկայություն հետախուզական աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ առաջին բուժօգնության միջոցների առկայություն, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում, հրդեհային անվտանգությունն ապահովելու, աշխատանքների ընթացքում պատահական գտածոների ընթացակարգի կիրառման, աշխատակիցների համար սանիտարակենցաղային հարմարությունների ստեղծման և աշխատանքներին մասնակցող անձնակազմի վերապատրաստման և այլ միջոցառումները:

Արուճի տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մի շարք մշտադիտարկումներ, որոնք են.

- մթնոլորտային օդում վնասակար նյութերի նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով աշխատանքների իրականացման վայրում, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ,
- հողային ծածկույթում հողերի քիմիական կազմի, հողերում նավթամթերքների պարունակության նպատակով նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն տեղամասի տարածքում, ամսական մեկ անգամ,
- մակերևութային ջրերի մշտադիտարկում՝ քիմիական կազմի նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն՝ տեղամասին հարակից ձորակում, շաբաթական մեկ անգամ,
- վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների մշտադիտարկումներ՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխության հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում տեղամասի և հարակից տարածքներում՝ տարեկան մեկ անգամ:

Մշտադիտարկումների իրականացման համար ընկերության կողմից հատկացվելու է 150.0հազ.դրամ գումար:

Պատճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության փուլերում, Արագածոտնի մարզի Նոր Ամանոս վարչական համայնքում անցկացված հանրային քննարկումներ ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Կադաստրի կոմիտեից», «Արագածոտնի մարզպետարանից», ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
2. Աշխատանքների կատարման ընթացքում առաջնորդվել աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար անհարաժեշտ է առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի պահանջներով:
3. Ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների՝ մթնոլորտային օդ, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանության, մակերևութայի և ստորերկրյա ջրերի մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
4. Անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
5. Ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 20 հունվարի 2005 թվականի N 64-Ն «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին որոշման պահանջներով»:
6. Առաջնորդվել ՀՀ կառավարության 20.01.2005թ.ի թիվ 64-Ն որոշման պահանջներով:
7. Առաջնորդվել ՀՀ կառավարության «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» թիվ 781-Ն որոշման պահանջներին համապատասխան:
8. Փոշենստեցման համար կատարել ջրցան աշխատանքներ:
9. Դիտարկել գործունեության տարածքին մոտեցող ճանապարհի այլընտրանքային տարբերակը:
10. Անհրաժեշտ է պարտադիր ապահովել հայտում ներկայացված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
11. Ապահովել և պահպանել բնապահպանական և մշտադիտարկումների ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:
12. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հայտում ներկայացված տեխնոլոգիակա նորմերը, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև ապահովել սոցիալական ծրագրերի իրականացում:

Առաջարկվող մեղմացնող միջոցառումները ընդունել պարտադիր կատարման ենթակա:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Արագածոտնի մարզ, Արուճի տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ն. Նասիբյան